

ւանդ երբոր կենդանի ու լաւ փայլուն
ըլլայ ունեցած խարտեաշ գոյնը , ու
բծերն ալ լաւ սև ըլլան :

Բստ ու մեմն 'ի ճանապարհորդաց
Վուինէայի ինձառիւծը աւելի կատաղի
է և ինչուան մարդուս վրայ կը յարձը-
կի , որ սովորաբար Վուինէայի ոչ ա-
ռիւծն և ոչ վագրը մարդուս վրայ կը
յարձըկին , թէ որ սաստիկ անօթի չըլ-
լան : Վիուխը բստ բաւականին մեծ է
և կնճիթը կարճ . բերանը լայն ու ծա-
մելիքը զօրաւոր ակռաներով զինեալ ,
որն որ հոնտեղացի կանայք մանեակի
տեղ վզերնէն կը կախեն : Աճքերը սաս-
տիկ վառվռուն են և միշտ կը շարժե-
ն ու խելքը միտքը իր որսին վրան է : Ստ-
քին ճանկերը խիստ զօրաւոր են , և
մարդուս ձեռքին մատուրներուն պէս կը
բանայ ու կը գոցէ . շատ դժուարին է
մէյմը իր ճանկերուն տակը իյնալէն
վերջը խալըսիլ . որովհետեւ չէ թէ
միայն անոնցմով իր որսը ամուր մը կը
բռնէ , այլ նաև կը բզըքաւէ ու կը յօշո-
տէ , և քանի մը վայրկենի մէջ կ'անշն-
չացընէ :

Գերի : (Տես երես 285)

Բնդհատեցաւ խօսակցութիւնը , վասն
զի ժողովուրդը սկսաւ հրապարակը լե-
ցուիլ :

Երբոր Վաստորի տաճարին ջրէ ժա-
մացոյցը հինգերորդ ժամը զարկաւ , որ
միջոցին որ ժողովուրդը հրապարակը
պիտի լեցուէր , գերեվարները հրաման
տուին գերիներուն որ լուռ կենան :

Վորվա իր բնատուր սիրոյ և գթու-
թեան զգացմունքէն աւելի ևս զօրա-
ցած , գնաց Սորգանին դիմացը կեցաւ ,
և տղան բողբոջովն քովը մօտիկցուց :
Իսկ Արվինոս մօրը ձեռքը սրտին վրայ
դրած այնպիսի կերպով մը անոր նայե-
ցաւ , որ կը յայտնէր իր մանկական հե-
ղահամբոյր հպատակութիւնը և միան-
գամայն իր մտացը այրական վեհանձն
հաստատութիւնը :

Վիւ առնէն հետաքրքիր մարդիկ
բոլոր հրապարակին մէջ եղած պան-
դոկներուն չորս կողմը ժողովեցան , ուր որ
գերիները հանգչելու համար դրուած
էին : Արաքանչիւր գերեվար , ձեռքը
բարակ գաւազան մը առած , ցցապատ
ցանկին դիմացը վեր վար քալելով կը
ջանար իրեն ընկերակիցներէն աւելի
սուտ ստի վրայ բարդելով գերեաց գինը
աճեցընել :

— Ինծի եկէք , ինծի , ազնիւ քաղա-
քացիք , կը պողար Վորվայի և Արվի-
նոսի տէրը . ընկերներէս մէկն ալ չկըր-
նար ձեզի իմիներուն պէս լաւ յատկու-
թիւններ ունեցող գերիներ տալ : Ար-
դէն երկար ատենէ 'ի վեր ծանօթ է
ձեզի իմ առուտուրս և վաճառքներուս
աղէկութիւնը : Այլ երջը երեսուն տա-
րեկան վայելագեղ և աշխոյժ առմորի-
կացի մը ցուցընելով , Սըրոր նայեցէք ,
ըսաւ . ուր կրնաք գտնալ ասանկ ուժեղ
և գեղեցիկ մարդ մը , որ արժանի է
արդարեւ հերակէս կոչուելու : Ուրեմն ,
հաղնուական հռովմայեցիք , հաւատա-
ցէք խօսքիս , և գիտցէք որ ըսածս սուտ
չէ , վասն զի ամենեւին հարկ ալ չկայ .
աս գերիս բաց 'ի իր զարմանալի գե-
ղեցկութենէն շատ աւելի մեծ յարգ
ունի իր չափաւորութեանը , խելքին ,
համեստութեանն և հլութեանը հա-
մար : Ս'վ ուրեմն ամենայն սիրով թե-
թե զոհ մը չըներ այսպիսի սակաւա-
գիւտ գանձ մը ձեռք ձգելու համար :

Որչափ որ բազմութիւնը գերեվարին
չորս կողմը աւելի կը խռնէր , այնչափ ալ
ինքը իր շատախօս շաղակրատանքը եր-
թալով կը կրկնապատկէր . և կարծես
թէ այն վայելագէժ , ծանրաբարոյ և
խրոխտապանծ Վելտաց դիմացը կե-
ցած , իբրեւ կենդանի պատկեր մը ամե-
նայն անբանական և ամօթալի ախտից ,
աւելի ևս իւր նուաստ և անարգ կերպը
դուրս կը ցատքեցընէր :

Իսկ մը հօգի ծախուեցան , և սիրե-
լեաց իրարմէ բաժանման վճիւր տրուե-
ցաւ : Շատ մը տղայք որ իրենց հօրեր-
նուն ծերութեան նեցուկն էին , զիրենք
թողուցին գացին , և մայրեր իրենց զաւ-

կրնէրէն բաժնուեցան . բայց ամէնքն ալ հաստատութեամբ տուած խոստմունքնին պահելով, կը ջանային թշնա մեաց առջև իրենց ցաւոցը նշան մը չտալ : Երբոր իրենցմէ մէկը հռովմայեցւոց բազմութեան հետ խառնուելովն կը հեռանար ու աներևոյթ կ'ըլլար, մնացածները իրենց հառաչանքն և արցունքը կը բռնէին ու կը ծածկէին, անանկ որ եթէ մայր մը որդիէն բաժնուելու ատեն չէր կրնար ինքզինքը բռնել, մէջերնէն ոմանք առջևը կեցած, կը ջանային անոր հեծութիւնը և մորմօրը տէրերնուն չիմացնել :

Եւս աղեկէզ՝ բայց և լռին հանգէսը՝ Եւրովային սիրտը տակնուվրայ ըրաւ . ինչ դէպք որ իր ընկերներէն մէկուն պատահէր, կարծես թէ սրտին խորը նոր ցաւագին վէրք մը կը բանար . և երբոր նուազելու մօտիկ ըլլար, մէկէն աչքերը Սորգանին կը դարձնէր, և անոր անխռով կերպը տեսնելով սիրտ կ'առնէր :

Բայց քիչ մը ատեն խեղճ կնկան սիրտը ուրախութեամբ լեցուեցաւ, երբոր տեսաւ որ մայր մը որդւովը հանգերձ մէկ տիրոջ մը ծախուեցաւ : Սակայն ցաւալի ու դառն յիշատակներ զինքը նորէն խռովեցին, տեսնալով չորս կողմը մայրեր առանց որդւոց, և տղայք առանց մօր :

Տասը հոգի միայն մնացեր էին ծախուելիք, որոնց մէջն էին Սորգան, Եւրովա և Եւրվինոս, երբոր գնողներէն մէկուն աչքը Եւրվինոսի վրայ յառեցաւ մնաց ու սկսաւ ուշադրութեամբ զինքը դիտել :

Վերելարը որուն խելքն ու միտքը գերիներուն վրայ էր, մէկէն տղունքով վազեց, և գաւազանին ծայրը անոր ուսին վրայ դնելով, և գնել ուզողին դառնալով,

— Եւս մը սըւոր նայէ, ըսաւ . անշուշտ զինքը ասանկ բարձրահասակ և ուժեղ տեսնելովդ՝ տասնհինգ տարուան մը կայ պիտի ըսես հարկաւ . բայց ես քեզի կ'ըսեմ որ ճիշդ ինը տարուան է . մտածէ մէկ մը թէ օր մը ինչ

պիտի դառնայ . իրաւցընէ զարմանալի է այս Եւրովայեցւոց ազգը :

Եւրովային սիրտը դող ելաւ, երբոր գերելարը գաւազանը տղուն ուսին վըրայ դրաւ . իսկ Եւրվինոս ամենեւին այլայլութեան նշան մը չցրցուց, մինչդեռ գնողը երկայն բարակ քննութիւններ կ'ընէր :

Երբոր մարդը որոշեց գնել զտղսն, գերելարը երեքհարիւր արծաթ դահեկան պահանջեց . ոմանք ինչուան չորս հարիւր տուին, բայց անկէ աւելի դինը չբարձրացաւ :

Եւս ատեն հռովմայեցին որ աւելի գին տուողն եղաւ, ցցապատնէչէն դուրս ելլելով մարդու մը քով գնաց, որուն դիմացը պզտի սեղանատախտակ մը կար, վրան ալ կշիռք մը . և ձեռքը քուէ մը առնելով,

— Եւս օրինաց հռովմայեցւոց, ըսաւ, այս տղան իմն է, զորն որ այս դրամով և կշիռքով գնեցի :

Եւս ըսելով քուէն նժարքներէն մէկուն մէջ ձգեց :

Եւս ձայնը Եւրովայի սրտին իբրև մահացու հարուած մը եղաւ, որովհետեւ ինքը իր ընկերացը իւրաքանչիւրին բաժնուելուն ներկայ եղեր էր : Տղան մօրը երեսին տժգունութիւնը տեսնելով սկզբան այլայլեցաւ, բայց Սորգանի մէկ նայուածքը բաւական եղաւ նորէն իր սիրտը հանդարտեցնելու :

Ներքէ կրակոտ կերպով մը դէպ 'ի Եւրովային ծռելով, ականջէն վար քանի մը խօսք փսփսաց, որով խեղճ մայրը նորէն գլուխը վեր բարձրացուց :

Բայց այս գործողութիւնը անանկ շուտով եղաւ, որ մէկն ալ չիմացաւ, ինչպէս Սորգանին ալ անանկ երեցաւ . վասն զի առջինին պէս արհամարհանօք կը նայէր ժողովրդեան վրայ :

Վերելարը եկաւ Եւրվինոսն առնելու որ գնողին առջի գնած գերեացը խմբին մէջ խառնէ, որոնք ցցապատնէչին քովը իրենց նոր ընկերակցին կը սպասէին : Վիրտ ու անբանական կերպով մը տղան մօրմէն բաժնեցին, և չթողուցին որ իրարու վերջին համբոյր մը տան :

— Սնան բարով, մայր իմ, պողաց
Լըվինոս յուսամոր քիչ ատենէն նորէն
կը տեսնուինք . ես յոյսս իմ զօրութեան
և համբերութեանս վրայ դրած եմ :

— Սնան բարով, Սորգան :

— Բարով երթաս, կրկնեց ծերը, ձեռ-
քերն անոր երկընցընելով, և երկայն
ատեն անանկ թևատարած մնաց, որ-
պէս զի հետաքրքիր մարդիկ Սորվայի
դալկահար երեսը չտեսնեն :

Լըվինոսը գնող հռովմայեցին, քաղ-
քին հարուստ պատրիկներէն մէկուն
գործակալն էր : Առդիոս Սորվինոս քա-
նի մը տարի առաջ երկու հարիւր մի-
լիոն արծաթի սեստերաց ժառանգ ե-
ղեր էր, որուն մեծ մասը արդէն վատ-
նած էր : Իրեն տունը Աելիոս լեռան
ամենափառաւոր շէնքերէն մէկն էր :
Բոլոր յատակը Կարիստեայ մարմարիոն
քարերով շինած էր, սիւները պղնձէ,
արձանները փղոսկրէ, և բաղանիքը
պորփիրեան կճէ : Չորից եղանակաց
թուովը չորս զարդարուն սրահ կար կո-
չունքի համար . անկողինները արծաթի
դրուագով քանդակած էին կիտրոնի
փայտի վրայ, բարձերը կարապի փե-
տուրէ, ծածկոցները Բաբելոնի մե-
տաքսէ : Բոլոր պատերը Լտտալեան
մետաքսով պատած, և կոշնոց սեղանա-
տախտակներուն վրայ ալ ոսկեճամուկ
ծիրանին եր դրուած էին :

Երբոր գնողը տղուն հետ մէկտեղ
այս հոյակապ պալատը հասաւ, զար-
կաւ պղնձէ դուռն մը, և իսկոյն դռնա-
պանը, որ մերձակայ խցին մէջ քա-
մուած կեցած էր, վազեց բացաւ . մէ-
կէն Լըվինոս տիրոջը առջև հանուե-
ցաւ :

Իսկ Սորվինոս՝ իր կարքեդոնացի
թարգման գերին կանչել տուաւ, որուն
պաշտօնն էր Սորվինոսի կողմանէ իր ե-
րեք հարիւր գերեացը հետ խօսիլ : Բը
մարդս գերի իյնալէն առաջ վաճառա-
կանութեան համար կարքեդոնացի նա-
ւերով ամէն տեղ ծովով ճամբորդու-
թիւն ըրած էր, որով գրեթէ ամէն
ծովեզերեայ ազգաց լեզուն կը խօսէր :

Սորվինոս՝ տղան անոր յանձնեց որպէս

զի աւելի պատշաճ զգեստ մը հագուե-
ցընէ, և հարկաւոր եղածը սորվեցընէ :
Իսկ կարքեդոնացին առաւ տղան ու գե-
րեաց բնակած յարկը տարաւ :

— Վու նոր վիճակիդ պարտքերուդ
վրայ մէկը քեզի բան մը չըսա՛ւ, հար-
ցուց կարքեդոնացին :

— Ես ազնուական և ազատ մարդ-
կանց կրթութիւն առեր եմ, պատաս-
խանեց Լըվինոս անտարբեր կերպով մը :
Թարգմանը ծիծաղեցաւ, ու զինքը
հենգնելով, ըսաւ .

— Լըժանի զաւակ այն Աելտաց որ
երկնքին իյնալէն միայն կը վախնան :
Բայց ես քեզի խրատ կուտամ որ զգոյշ
կենաս ան տեսակ բաներ խօսելէն, որ-
պէս զի խարազանի հարուածներ չու-
տես : Եթէ պէտք է գիտնաս որ իբրեւ
գերի՝ դու տեսակ մը ապրանք ես և ոչ
թէ մարդ մը . տէրդ կրնայ ուզածին
պէս զքեզ գործածել, առանց պատճա-
ռի շղթայի զարնել, և զուարճութեան
համար ծեծ տալ, կամ նաև Ս ետիոս
Պոլլիոնի պէս զքեզ իր աւազանին ձրկ-
ներուն կերակուր ընել :

— Թող բանեցընէ իր իրաւունքը,
ըսաւ Լըվինոս :

— Սորվինոս բարի մարդ մըն է,
կրկնեց կարքեդոնացին, և հռովմայ
զբօսասէրներէն մէկը, որուն գլխաւոր
զբաղմունքն է ինքզինքը կործանել : Առ
վորաբար ժամը տասնին (ըստ եւրոպա-
յւոց երեկոյեան չորսին) կ'ելլայ, և ինք-
զինքը սպասաւորաց ձեռքը կը թողու,
որոնք զինքը կը խնկեն, այտերը կարմիր
բորակի փրփրով կը ներկեն, և խոտով
մը ծնօտը կը շփեն, որպէս զի մօրուքը
թափի . հարիւր յիսուն գերի հոս պարզ
իրեն ծառայութեան համար են, որոնց
իւրաքանչիւրը զանազան պաշտօն ունի :

— Իմինս ինչ պիտի ըլլայ, հարցուց
Լըվինոս :

— Վու պաշտօնդ պիտի ըլլայ կառք
քաշել, պատասխանեց թարգմանը . ե-
տեւէս եկուր որ զքեզ քու կայարանդ
տանիմ :

Տարաւ զտղան կառատունը, և հոն
տեղի զանազան կառքերը անոր ցըցուց :

— Բոնք, ըսաւ, Գերմանացւոց
գործածած կառքերուն նման՝ չորս ա-
նուով են, որոնք պաշար ու գերի տանե-
լու կը գործածուին, անդիմանալի ծած-
քով կառքերն են որոնց մէջ տանտէրը
կը նստի անձրեւի ժամանակ. իսկ աջ
կողմի փղոսկրապատ և արծաթակուռ
թեթև կառքերն որ կը տեսնես, Եւր-
պիւնոսի համար են՝ երբ քալելու կ'ելլէ.
ձախ կողմիներն ալ պարսիկ գորգերով
ու ծիրաներփեան վարագոյրներով զար-
դարած դեսպակներ են:

Եւրպիւնոս զարմացած մնաց անանկ
փառաւոր ճոխութեան վրայ: Թարգ-
մանը զինքը սալայատակ ախոռը տա-
րաւ, որուն բոլոր վանդակները իւ-
նայի քարէ էին:

— Եւս յիսուն ջորիները որ կարգաւ
շարուած կը տեսնես, ըսաւ, Եւրպիւնոսի
կառքերը քաշելու համար են. իսկ մէ-
կալ կողմի ձիերը որ վաթսուն հատ են,
տանտիրոջ դուրս ելլելու ատեն, իր
սպառապանաց առջևէն գացող նուազ
դասի գերեաց համար են: Հիմա որ տե-
ղերը կը ճանչնաս, եկուր զքեզ ախոռա-
պետին տանիմ որ քեզի ընելիքդ սոր-
վեցնէ:

Եւրպիւնոս թարգմանին հետ մէկտեղ
ախոռին վերակեցու գլխաւոր գերիին
դիմացը ելաւ, որ տղուն թնչ պաշտօն
կատարելիքը զուրցեց կարճեդոնացւոյն.
ինքն ալ ըսածները անոր բացատրէն
վերջը,

— Եւս ուրիշ յանձնարարութիւն
մըն ալ ունիմ քեզի ընելիք, ըսաւ. Եւս
որ երբոր լատիններէն սորվիս, տիրոջ
դիմաց միշտ լուութիւն պահես: Եւս
պէս խիստ է գերիներուն հետ, որ ա-
մենեւին հետեւնին չխօսիր: Երբոր բան
մը հրամայելու ըլլայ, նշանով կամ տախ-
տակի վրայ գրելով կ'իմացնէ: Հիմա
գնա կերակուրդ կեր ու վերջը սկսէ աշ-
խատիլ:

Եւրպիւնոսի բոլոր աս լսած ու տեսած
բաները իրեն համար անանկ նոր էին
որ չէ թէ միայն սրտին դառնութիւնը
չնուազեցաւ, այլ նոյն լքման վիճակին
մէջ մնաց: Եւս զարմանքը տարօրինակ

աւելցաւ երբոր տեսաւ զԵւրպիւնոս որ
վրան ծիրաններէ վերարկու մը առած,
մագները կինամոմով օծած, ձեռքերը
չեչաքարով մաքրած և մատուրները
մարգրտայեռ ու ականակուռ մատնի-
ներով զարդարած, իր բարեկամներուն
սրնգահարներուն ու սալեան քրմերուն
հետ մէկտեղ տնէն դուրս ելաւ. վասն
զի դեռ ասանկ մեծագանձ ճոխութիւն
մը տեսած չէր: Հռովմայ հարուստ
պատրիկներն այս միջոցին անանկ կեանք
մը կ'անցընէին, որ իրենց տները ըստ
ամենայնի կը հաւասարէին Եւրոպ
հզո-
րագոյն թագաւորաց մեղկ արքունեա-
ցը, ուր ուրիշ բան չէր լսուէր ու չէր
տեսնուէր բայց եթէ գուսանաց երգե-
րու ձայներ, կոչնականաց գետինը սրի-
ռած պետեան վարդի պսակներ, և ա-
նուշահամ կերակուրներու հոտեր, ու
րոնք կիսաբաց լուսամուտներէն կը բու-
րէին: Եւս առաւօտ շատ մը դատար-
կապորտ մարդիկ կու գային գաւիթը
կը լեցուէին, քանի մը ստակ ձեռք ձգե-
լու համար, որպէս զի դատաւորի ըն-
տրութեան ժամանակ իրենց տիրոջը
նպաստաւոր քուէ ձգեն: Երբեմն նաև
տանտէրն ալ իր սովեալ շողջորթնե-
րուն հետ կը տեսնուէր, ցաթկուտուկ
քալուածքով մը մէջընէն անցնելով,
և գլուխը դէպ 'ի քովը կեցող գերիին
ծռած, որ ականջէն իւրաքանչիւրին ա-
նունը կը զուրցէր:

() րուան մնացած մասը կամ ոտքով
հրապարակին կամարակապներուն տակ
կամ կառքով Եւրպեան ճամբուն վրայ
քալելով կ'անցընէր: Եւրջը երեկոյեան
ընթրիքին տուն կը դառնար, որուն կը
վազէին հացկատակները, և սովորաբար
ինչուան առաւօտ կը տեւէր:

Եւրպիւնոսի սեղանը նշանաւոր էր կե-
րակուրներուն փափկութեանը համար.
և իր սեղանակիցները ստակ խոստացեր
էին անոնց որ նոր տեսակ կերակու-
րներ գտնեն. իր խոհակերը, զոր երկու
հարիւր հազար դահեկանով գներ էր,
(41,000 ֆրանք) այնպիսի ճարտար
մարդ մըն էր, որ Եւրպիւնոս անուանի
որկորամիլը իբրև հասարակապետու-

Թեան օգտակար անձի մը արծաթէ պսակ մը ընծայ ըրեր էր : Եւոր համար Կորվինոսի սեղանը միշտ անպակաս էին Հռովմայ ազնուականներն և մեծ աստիճանի դատաւորներ :

Ինչ զարմանք որ ունեցեր էր Լըվինոս աս նոր կենացս վրայ՝ քիչ ատենէն արհամարհութիւն փոխուեցաւ : Այսինքն զի վարժած ըլլալով իր սակաւապէտ ազգին սովորութեանցը , և բանի տեղ չսեպելու այն ամէն բան որ մարդուս ուժին և խելքին առաւելութիւն մը չբերեր , խորիստ արհամարհութեամբ մը ատեց այն անշահ շուայութիւնները , և սկսաւ նորէն տիրութեամբ իր հայրենեացը վրայ մտածել :

Սորը յիշատակը միշտ աչքին առջևն էր , որուն սէրը , իբրև կենաց վերջին յոյս մը միայն քովը մնացեր էր . և կը յուսար որ Հռովմասդին անդին փնտըռելով՝ իրեն որուն քովը ըլլալը կարենայ իմանալ :

Բայց այս դժուարին բանիս ձեռք զարնէլէն առաջ , հարկ էր նախ որ իր միտքը հասկըցնելու ճար մը գտնայ : Աստի սկսաւ լատիններէն սորվիլ անանկ կարգէ դուրս եռանդեամբ մը որ միայն այնպիսի կրից և տագնապի մէջ եղող մը կրնայ ունենալ : Վժբադղաբար Կելրոաց անհարթ լեզուին վարժած ըլլալով , չէր կրնար փափուկ կերպով հընչել ու արտասանել լատիններէն : Վճռաւորութեամբ և չուզելով յիշողութեանը մէջ կ'ամբարէր ատենի ազգին բառերը , և կարծես թէ իր հայրենասէր ոգին նաև յաղթականին լեզուն ատենի ընել տուած էր : Բայց համբերատար և հաստատուն կամքով՝ ամենայն դժուարութեանց յաղթեց , և քանի մը ամիս հազիւ թէ անցաւ չանցաւ Լըվինոս սկսաւ ուրիշին ըսածը հասկընալ , պատասխան ևս տալ :

Հազիւ թէ քանի մը բան խօսիլ սկըսաւ՝ մէկէն մայրը գտնելու ետեւէ եղաւ . բայց շուտով իմացաւ որ միտքը զրաժը յաջողցնելու համար , պէտք էր որ ազատութիւն ունենար , և յարմար ժամանակի սպասէր : Սիշտ տիրոջը գոր-

ծոցը զբաղած էր , և օրուան մէջ հազիւ թէ քանի մը ժամ պարապ ատեն կ'ունենար : Եւսպէս խել մը ամիս անցաւ և ինքը չկրցաւ մօրը վիճակին վրայ բան մը իմանալ :

Երբոր տղան տրտում և լքեալ կը ջանար հնարք մը գտնելու , որ կարենայ իր նպատակին հասնիլ , յանկարծ նոր դէպք մը պատահելով , բոլոր իր մտքին խորհուրդները փոխեց :

Կը շարունակուի :

Պատդիւ :

(Շարունակութիւն և վերջ : Տես երես 265)

Երեսուն տարի մը կայ որ Վաղղիա ուսմանց , ճարտարութեան և ձեռակերտից մէջ տարի տարուան վրայ անկարծելի յառաջադիմութեան մը մէջ է , օգտակար գիւտեր , նորահնար մեքենաներ , արուեստից կատարելագործութիւններ վկայ են ըսածներնուս : Եւսպիսի փոյթ մը կայ որ և իցէ գիտութեանց ճիւղերը զարգացնելու , որուն նմանք քիչ ազգի մէջ կը տեսնուի , և յիրս իրս ալ գաղղիացի հանձարը կը գերազանցէ քան զայս : () րազրաց և լրագրաց բազմութիւնն ալ կարգէ դուրս եղաւ աս ետքի տարիներս , և այս մասին մէջ միայն Ենգղիա կը հաւասարի ու կ'անցնի ալ քան զինքը . այս օրուան օրս 470 հրատարակմունք կ'ըլլուին միայն Բարիզու մէջ , իսկ դրսերը 642 , 'ի բաց թողլով մանր մունր օրական կամ շաբաթական հրատարակմունքները , որոնց թիւը չկայ : Բարիզու մէջ 91 տպարան կայ մեծ ու պզտիկ , որոնց մէջ նշանաւոր է Տիտոյի տպարանը իր առաջնութեամբն ու գեղեցկատիպ տպագրութիւններով : Բարիզէն դուրս բոլոր Վաղղիոյ տպարաններուն թիւն է 949 : Եւկէց կը տեսնենք թէ ինչ աստիճանի ընթերցասիրութիւն կայ , որ մեծ խրախոյս է գիտութեանց յառաջադիմելուն և հանձարոյ զարգացման :